

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ – REPORT

ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

*Արցախի պետական համալսարան
փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս,
hrayr.pashayan@mail.ru*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿԻ ԴԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոգվածում ներկայացվում է քաղաքական փաստարկի դերը դարաբաղյան հակամարտության ծագման, զարգացման և կարգավորմանն ուղղված զործրնթացում, այն համադրելով մի կողմից նմանատիպ հակամարտությունների հետ, մյուս կողմից հակամարտությամբ առավել շահագրգռված դերակատարների քաղաքական շահերի հետ:

Ղարաբաղյան հիմնախնդիրը քաղաքականացվել է դեռևս անցած դարի 20-ական թվականներին, երբ հակառակ Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) ժողովրդի կամքի՝ սոցիալիստական հեղափոխությունը դեպի Արևելք արտահանելու նպատակով, արդեն Խորհրդային Հայաստանի մաս ճանաչված ԼՂ-ը¹ նրանից պոկվել և Ադրբեյջանի սահմաններն է մտցվել նման լիազորություններ չունեցող երրորդ կողմի թելադրանքով: Բայց հենց սկզբից էլ փորձ է կատարվել նրբանկատ ձևով քողարկել հիմնախնդրի «կարգավորման» բուն՝ քաղաքական դրդապատճառը և այն հիմնավորել մուսուլմանների և հայերի միջև խաղաղության և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապի անհրաժեշտության փաստարկմամբ²:

Խորհրդային տարիներին հիմնախնդիրը շարունակվել է քաղաքականացված մնալ, այդ իսկ պատճառով խորհրդային ղեկավարությունը «աչք է փակել» Լեռնային Ղարաբաղի՝ ԼՂԻՄ կազմավորվելու ընթացքում նրա տարածքի կրճատման³, նրա տարածքից նոր տարածքային միավորի՝ Կարմիր Քրդստանի ստեղծման ու վերացման վրա⁴: Մոսկվայի նման

¹ Вестник архивов Армении, 1989, N 1, док. N 23, 126.

² ЦПА ИМЛ при ЦК. КПСС, ф. 64. оп. 1 ед. X стр. 1, 116, 124.

³ “Бакинский рабочий”, 9 июля, 1923.

⁴ Բաբայան Դ., 2005, թիվ 4 (10):

քաղաքականության արդյունքում⁵ ինտերնացիոնալ հռչակված Խորհրդային Ադրբեջանում իշխանությունը տրվեց տեղի թուրքերին (կովկասյան թաթարներին), որոնք 1930-ական թթ. մեխանիկական անվանափոխությամբ դարձան ադրբեջանցիներ:

Քաղաքական փաստարկները նոր դերակատարություն ձեռք բերեցին 1988 թվականից, երբ սկսվեց Ղարաբաղյան շարժման նոր փուլը և Արևմուտքի համար ազգային խնդիրները դարձան ԽՍՀՄ կազմաքանդման միջոց: Քաղաքական նկատառումներով այս շրջանում ԱՄՆ կոնգրեսը հանդես եկավ հայտարարություններով, որոնցում կոչ էր արվում ԽՍՀՄ ղեկավարությանը հիմնահարցը լուծել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հայացքներին համապատասխան⁶, իսկ 1991 թվականին, երբ ԽՍՀՄ լուծարումը մտավ ավարտական փուլ, ԱՄՆ-ը հայտարարեց, որ հետխորհրդային տարածքում իրենք նորանկախ պետությունները ճանաչելու են միութենական հանրապետությունների սահմաններում⁷:

Քաղաքական գործոնները հետխորհրդային շրջանում ձեռք բերեցին հատուկ նշանակություն, պայմանավորված նրանով, որ Անդրկովկասը հայտնվեց խոշոր պետությունների աշխարհաքաղաքական շահերի կիզակետում: Քաղաքական գործոնները իրականում բավականին բարդ են և պարզաբանման կարոտ:

Արևմուտքը, որը տարբեր պատճառներով շահագրգռված էր Կոսովոյի գերարագ միջազգային լեգիտիմացմամբ, 2003 թվականին առաջ է քաշել «Չափանիշներ՝ կարգավիճակից առաջ» բանաձևը: Սակայն, արտաքին աջակցությամբ գործադրված ջանքերը սպասված արդյունքի չեն հանգեցրել: Այնուամենայնիվ, դա չի խանգարել ԱՄՆ-ին և Եվրոպական երկրների մեծամասնությանը 2008-ին ճանաչել կառավարման թույլ հաստատություններ և մարդու իրավունքների ոլորտում խնդիրներ ունեցող երկրի անկախությունը: Փաստորեն՝ «չափանիշներն» ու «կարգավիճակը» փոխվել են տեղերով, քանզի գերակայել է քաղաքական նպատակահարմարությունը⁸:

Ընդհանրապես, անցած դարի 90-ականների սկզբներին հարավսլավական հանրապետությունների ճանաչման համար առաջադրված պայմանները հիմք են տվել ենթադրելու, որ ճանաչումը կարելի է «վաստակել» արդյունավետ ժողովրդավարական հաստատությունները զարգացնելու միջոցով: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ իրավա-

⁵ Փաշայան Հ., 2010, թիվ 2 (9):

⁶ Փաշայան Հ., 2007, թիվ 3(16), 48-54:

⁷ Մանասյան Ա., 2008, 10-11:

⁸ Մայիլյան Մ., 2012, N 3 (39), 24:

* Թեև ժողովրդավարական հաստատությունների կարևորությունը հիշատակվում էր Կոսովոյի անկախության հռչակագիրը ճանաչած պետությունների կողմից, վերջինիս ճանաչումն ինքնին չէր հիմնվում ինստիտուցիոնալ չափանիշների վրա. դրանք պետք է

կան ընթացակարգերը (անկախության վերաբերյալ համաժողովրդական հանրաքվեներ, քաղաքակիրթ օրենքների ընդունում և այլն) կարևոր են ճանաչում ստանալու համար, բայց, այնուամենայնիվ, ճանաչման որոշումն ընդունելու համար գերակա գործոնը քաղաքական նպատակահարմարությունն է: Բիարկե, քաղաքական վճիռ կայացնելու ժամանակ արտաքին դերակատարները «հիմք են ընդունում» յուրաքանչյուր պետական կազմավորման ներսում ընդունված ինքնորոշված բնակչության իրավական ակտերը: Այսինքն, համապատասխան իրավական հիմքի առկայությունը «նախընտրելի», բայց ճանաչում ստանալու համար ոչ բավարար պայման է:

Կոսովյան նախադեպից առաջ միջազգային հանրությունը հրաժարվում էր ճանաչել նոր պետություններ, եթե «մետրոպոլիա-պետությունը» դրան դեմ էր: Այնուամենայնիվ, տարբեր պատճառներով այդպիսի պետությունները կարող էին ճանաչվել որոշ երկրների կողմից: Հաճախ ՄԱԿ-ի անդամ սույն պետություններն էին ինքնակազմակերպված համերաշխության հանգամանքների բերմամբ, ինչպես նաև «խնդրահարույց հարևանի» դրությունը բարդացնելու ձգտմամբ, չճանաչված պետություններին ցուցաբերում էին քաղաքական, ֆինանսական և անգամ ռազմական աջակցություն⁹: Նման երկակի քաղաքականության կիրառման արդյունքում աշխարհում շարունակում են գոյություն ունենալ «մասնակիորեն ճանաչված» չճանաչված պետություններ՝ Աբխազիան, Կոսովոն, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (ՀԿԹՀ), Սահարայի Արաբական Ժողովրդավարական Հանրապետությունը (ՍԱԺՀ), Հարավային Օսիայի Հանրապետությունը (ՀՕՀ) և այլն: Այլ առանձնահատուկ օրինակ են Պաղեստինն ու Թայվանը (նրանք հրաժարվում են ճանաչել իրենց «մետրոպոլիա-պետությունների» լեգիտիմությունը): Այս պետությունները ևս ճանաչվել են ոչ թե ՄԱԿ-ի, այլ այդ կազմակերպության առանձին անդամների կողմից: Դա տեղի է ունեցել տարբեր պատճառներով, բայց ակնհայտ է, որ ժողովրդավարության կամ պետա-

հաջորդելին ճանաչմանը՝ դրանց կենսագործումը վերահսկող միջազգային ներկայացուցչի մասնակցությամբ: Այսինքն՝ որոշիչ էր գերտերությունների քաղաքականության գործոնը և ճիշտ բարեկամների առկայությունը: Այս կարծիքն ավելի է հաստատվել Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչումից հետո: Աբխազիան թերևս ուներ որոշակի հիմքեր հայտարարելու ժողովրդավարական հաստատությունների գոյության մասին, բայց Հարավային Օսիան դրանք իրականում չունեին: Այսպիսով, ճանաչման սույն դեպքերը բավական հեռու էին այն «վաստակված ինքնիշխանությունից», որին ապավինում են մյուս չճանաչված պետությունները:

⁹ Ադրբեջանա-դարաբադյան պատերազմի տարիներին այս մասին փաստող բազմաթիվ վկայություններ կան, օրինակ **Դեմոյան Հ.**, 2002: Ռուսաստանի կողմից բազմիցս գրանցվել են Թուրքիայից, Ադրբեջանից և Մերձավոր Արևելքի երկրներից զենքի և վարձկանների Չեչնիա տեղափոխման դեպքեր: **Smish Sebastian**, 1998, 186.

կան հաստատությունների զարգացման մակարդակն այնտեղ ոչ մի դեր չէր խաղում: Եվ եթե «մասնակիորեն ճանաչված» պետություններին հաջողվի հասնել լիարժեք միջազգային ճանաչման, ապա դա տեղի կունենա ոչ թե ժողովրդավարական չափանիշներին համապատասխանելու կամ պետական հաստատությունների արդյունավետ գործառնության շնորհիվ, այլ բոլորովին այլ քաղաքական պատճառներով: Չճանաչված Սոմալիլենդը (երբեմնի «Բրիտանական Սոմալի» գաղութը) շատ ավելի հաջողված ու կայացած է՝ քայքայման և անիշխանության վիճակում գտնվող, բայց միջազգային հանրության կողմից ցայսօր ճանաչվող Սոմալիի Հանրապետության համեմատ: Պաշտոնապես չճանաչված Սոմալիլենդի հետ դիվանագիտական հարաբերություններ են հաստատել Մեծ Բրիտանիան, Բելգիան, Գանան, Հարավային Աֆրիկայի Հանրապետությանը (ՀԱՀ), Շվեդիան, Ջիբութին: Սոմալիլենդի մայրաքաղաք Խարգեյսում գործում է Եթովպիայի դեսպանատունը: 2007 թվականին Եվրամիությունը Սոմալիլենդ պատվիրակություն է գործուղել՝ հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները քննարկելու համար: Որոշ ժամանակ անց այդտեղ է ժամանել նաև Աֆրիկյան Միության հատուկ ներկայացուցիչը՝ սույն չճանաչված պետության միջազգային ճանաչման հետ կապված հարցերին լուծում տալու նպատակով: Այդ ժամանակվանից ի վեր տարիներ են անցել, բայց իրավիճակը նույնն է մնում. շարունակում է գոյություն ունենալ ՄԱԿ-ի կողմից ճանաչված, բայց փաստացիորեն մասնատված և ծովահենների ոստանի վերածված Սոմալիի Հանրապետությունը և չճանաչված, բայց անհամեմատ ավելի կայուն ու հաջողակ Սոմալիլենդը:

Ելնելով վերոգրյալից կարելի է վստահաբար ասել, որ նոր պետությունների ճանաչումն ամենից առաջ կախված է քաղաքական նպատակահարմարությունից կամ ճանաչող պետությունների շահերի աստիճանակարգում նոր պետությունների ունեցած տեղից: Տարածաշրջանի նկատմամբ շահեր ունեցող համաշխարհային դերակատարները հիմնականում կարնորում են մեկ հանգամանք. նոր պետությունը պետք է եաշխավորի տարածաշրջանում իրենց շահերի պաշտպանությունը՝ նրանց համար ընդունելի արժողության սահմաններում: Նման դեպքերում համաշխարհային դերակատարները նախապատվություն են տալիս նոր պետության ճանաչմանը: Ասվածը փաստում է նաև, որ առանց ճկուն և համակողմանի հիմնավորված քաղաքականության հնարավոր չէ ակնկալել որևէ ժողովրդի իր առջն դրված խնդիրների իրականացումը: Այդպես է եղել հնում, այդպես է այսօր և այդպես կլինի ապագայում: Քաղաքականությունը համարելով մարդկային գործունեության պսակը՝ հին հույներն այն դասում էին արվեստի, ստեղծագործության բարձր տեսակների շարքը: Բայց գաղտնիք չէ նաև, որ քաղաքագիտությունը նման չէ ոչ բնական և ոչ էլ ճշգրիտ գիտություններին:

Քանզի, ինչպես նշում է ամերիկյան հայտնի քաղաքագետ Ջոն Իոաննիդիսը, քաղաքագիտական ցանկացած հետազոտության հիմքում քաղաքական երևույթի վերաբերյալ հավաստի վկայության ստացման հնարավորության մասին որոշակի ենթադրությունն է ընկած¹⁰: Այլ կերպ ասած կարելի է պնդել, որ ցանկացած քաղաքական քայլ հիմնավորվում է քաղաքական փաստարկմամբ՝ որպես հիմնավորում այս կամ այն քաղաքականության իրականացման:

Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող կարևորագույն քաղաքական փաստարկներից մեկը, որը որպես «արգելք» հանդես է գալիս հակամարտության կարգավորման գործընթացում, կապված է ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև գոյություն չունեցող, սակայն նույն քաղաքական նկատառումներով հայտնաբերված հակասության հետ: Քաղաքական հարթությունում այն ուղեկցվելով «անհրաժեշտ» վերապահումներով ու շահերով, այս սկզբունքների բովանդակությունն ու ներքին տրամաբանությունն այնպես են աղավաղվում, որ հանրային իրավական գիտակցությունն անխուսափելիորեն հակվում է այն բանին, ըստ որի, այդ սկզբունքների միջև «գոյություն ունեցող» հակասությունը իբր խոչընդոտում է ղարաբաղյան հիմնախնդրի իրավական լուծմանը: Ազգերի ինքնորոշման իրավունքը դիտարկվում է տարածքային ամբողջականության սկզբունքի հետ այնպիսի հակադրության մեջ, ինչը կարող է իբր իրավաչափ համարվել բացառապես դրանցից մեկին նախապատվություն տալով: Իրոք, շատերն այն թյուր տպավորությունն ունեն, թե տարածքային ամբողջականության սկզբունքը պարզապես բացառում է ազգերի ինքնորոշման սկզբունքը, ուստի քաղաքականության մեջ, որոշակի շարժառիթներով, կարող է նախապատվությունը տրվել միայն դրանցից մեկին՝ մասնավորապես տարածքային ամբողջականությանը: Այսպիսով, աստիճանաբար տիրապետող է դառնում այն մտայնությունը, թե քաղաքական հարթությունում հաղթանակ ապահովելու համար մենք պետք է գտնենք հիմնավոր փաստարկներ, որոնք կբացառեն Ադրբեյջանի Հանրապետության նկատմամբ տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման հնարավորությունը: Հիմնախնդրի իրավական հիմքերի տեսակետից տարածքային ամբողջականության խնդիր ունի ոչ թե ԱՀ-ն այլև ԼՂՀ-ն¹⁴: Բայց այդ սկզբունքներից միայն մեկին նախապատվություն տալը, կարծում ենք, անհեռանկարային դիրքորոշում է: Հարցը ոչ միայն

¹⁰ Ioannidis J., 2005, vol. 2, N 8.

¹⁴ Այս մասին տես հեղինակի՝ 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրդյի որոշման իրավաքաղաքական տեսանկյունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության խնդիրը, Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին), 2009:

նրանումն է, որ այս երկու սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել ՄԱԿ-ի կանոնադրությամբ, ընդ որում՝ առաջինը հենց կանոնադրության ընդունմամբ (2-րդ հոդվածի 4-րդ կետ), իսկ մյուսը՝ կանոնադրության ընդունումից հետո (1-ին հոդվածի 2-րդ կետ)¹⁵, այլն հենց Լեոնային Ղարաբաղն է այն եզակի օրինակը, որի իրավական կարգավիճակի հստակեցումը միաժամանակ թելադրված է ինչպես տարածքային ամբողջականության, այնպես էլ ազգերի ինքնորոշման իրավունքի հիմնադրություններով: Այլ հարց է, որ քաղաքական դրդապատճառներով հիմնախնդիրը սկզբնական փուլում դարձել էր բացառապես տարածքային ամբողջականության քննարկման նյութ և միայն հետագայում է ավելացել նաև ազգային ինքնորոշման սկզբունքով ղեկավարվելու անհրաժեշտությունը, չնայած Լեոնային Ղարաբաղն ունի ինքնորոշման իրավունքից տարբերվող անկախության հռչակման այլ հիմնավորում, որն առայսօր հավուր պատշաճի չի օգտագործվում հայկական դիվանագիտության կողմից¹⁶:

Ժողովուրդների ազատ ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև իրականում չի կարող հակասություն լինել, այդ է վկայում նաև դրանց իրավական ուղղվածությունը¹⁷: Տարածքային ամբողջականությունը բացառապես արտաքին կողմնորոշում ունի և կարգավորում է պետության արտաքին սահմանների պաշտպանությունն այլ պետությունների ագրեսիայից, մինչդեռ ազգերի ինքնորոշումը միմիայն ներպետական ուղղվածություն ունի և կոչված է կարգավորելու տվյալ պետության ներսում ծագող միջազգային բնույթի վեճերի իրավաչափ լուծումը:

Ինքնորոշման սկզբունքը անկախ տարբեր երկրների որդեգրած դիրքորոշումներից, ինչպես ասում են, իր «սև» գործն է անում, որի արդյունքում փոփոխվում են նույն եվրոպական երկրների սահմանները:

Հայկական կողմը չպետք է տեղի տա պաշտոնական Բաքվի քարոզչությանը, որը հաճախակի վկայակոչում է Ադրբեջանի Հանրապետության, իբրև թե, «միջազգայնորեն ճանաչված սահմանների» ճանաչումը: Գաղափարն այն է, որի մասին է վկայում այն փաստը, որ թեև Ադրբեջանի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչվել է 1992 թվականին, միայն վերջերս է որոշվել ռուս-ադրբեջանական սահմանը, մինչ օրս շարունակվում է վրաց-ադրբեջանական սահմանի, ադրբեջանա-իրանական ծովային սահմանի սահմանագծումը, որոշված չէ նաև հենց Կասպից ծովի կարգավիճակը: Իսկ Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև սահմանների ճշտումն ընդհանրապես չի էլ սկսվել այդ երկրների միջև դիվանագիտական հարա-

¹⁵ Charter of the United Nations-<http://www.un.org/aboutun/charter/index.html>.

¹⁶ Մանասյան Ա., 2005:

¹⁷ Թորոպյան Ս., 2008:

բերությունների բացակայության պատճառով: Վերոնշյալը կրկին անգամ վկայում է, որ ճանաչումը քաղաքական ակտ է և սահմանների հետ անմիջական առնչություն չունի: Միաժամանակ, հակառակ տարածքային ամբողջականության գերակայության մասին արվող հայտարարություններին, պետությունների սահմանները եվրոպայում և նրանից դուրս շարունակվում են փոփոխվել, իսկ խոշոր տերությունները շարունակում են իրերը իրենց անուններով չկոչել՝ չկապելով այն ինքնորոշման իրավունքի հետ: Արևմտյան երկրները Կոսովոյի անկախության մեջ տեսնում են «առանձնահատուկ դեպք», Ռուսաստանը, որը հակված է Հարավային Օսիան և Աբխազիան անջատել Վրաստանից, հիմնավորում է փնտրում օսերի նկատմամբ վրացիների իրագործած ցեղասպանության քաղաքականության մեջ, և ինքնորոշման իրավունքը երկու դեպքերում էլ նրբաճկատ ձևով շրջանցվում է:

Ասվածը վկայում է, որ ժամանակ առ ժամանակ ոչ միայն փոխվում են միջազգային խաղի կանոնները, այլև գործում են նաև խաղի ինչ-որ անորոշ կանոններ, քանի որ քաղաքականությունը այնպիսի գործունեություն է ենթադրում, որի արդյունքները մշտապես անորոշ են¹⁸: Եվ ընդհանրապես, եթե անորոշության այս սկզբուրք չի գործում քաղաքականության մեջ, ապա մենք կարող ենք ասել, որ նորմալ քաղաքական գործընթացներ, որպես այդպիսիք չկան: Եթե հակամարտությունների կարգավորման գործընթացում արդյունքները նախօրոք հայտնի են և որևէ սկզբունք պարտադրվում է կողմերից մեկին, ապա դա հիմնախնդրի բռնի կերպով լուծում է:

Հարցը դիտարկենք մեկ այլ տեսանկյունից: Գաղտնիք չէ, որ միջազգային հարաբերությունները կարգավորվում են ընդունված միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների համաձայն: Սակայն գաղտնիք չէ նաև, որ միջազգային հարաբերություններում գործող իրավական ցանկացած ակտ իր մեջ քաղաքական տարր է պարունակում (այս մասին են վկայում Հելսինկյան եզրափակիչ ակտի և այլ իրավական ակտերի տարաբնույթ մեկնաբանությունները), այլապես կարելի է հենվել միջազգային իրավունքի վրա և բոլոր հարցերը համարել կարգավորված: Սակայն, այդ նույն իրավական դրույթները իրենց ձևակերպումները ստանում են միայն քաղաքական պայքարի և քաղաքական այս կամ այն փաստարկների «ճնշման» արդյունքում, ինչը նշանակում է, որ քաղաքական փաստարկների հավուր պատշաճի օգտվելուց է հիմնականում պայմանավորված ակնկալվող արդյունքները: Հետևաբար, ցանկացած հակամարտության կարգավորման գործընթացում քաղաքական փաստարկների կարևորությունն ակնհայտ իրողություն է: Այս տեսանկյունից ԵԱՀԿ Մինսկի խումբը, որպես ՌԴ, ԱՄՆ և ԵՄ-ի շահերը տարածաշրջանում

¹⁸ Панарин А., 1999, 3.

ներկայացնողի, հանդես գալով միջնորդի դերում, իրենց քաղաքական շահերից ելնելով արգելում են միմյանց կտրուկ կերպով միջամտել հակամարտությունների կարգավորմանը: Նման պայմաններում շարունակվում են պահպանվել հակամարտությունների կարգավորման քաղաքական խաղի կանոնները, հետևաբար, հակամարտությունների կարգավորման քաղաքական փաստարկները հանդես են գալիս որպես ինովացիոն գործընթացներ, որպես ազդեցություն գործելու վճռորոշ տարրեր, որոնք կարող են փոխել հակամարտության կերպարը, դրանով իսկ նպաստելով հիմնախնդրի վերջնական կարգավորման արդյունքների վրա:

Այսպիսով, միջազգային կենտրոնների կողմից ինքնորոշված պետությունների ճանաչմանն ուղղված քայլերի վերլուծությունները հստակորեն փաստում են, որ քաղաքական փաստարկները (իրավական, պատմական, տնտեսական և այլ փաստարկների գոյությամբ հանդերձ), այնուամենայնիվ, ամենաորոշիչ դերն են կատարում հակամարտությունների կարգավորման գործընթացում: Քաղաքագետ-դիվանագետի գենքը քաղաքական փաստարկներն են, և հենց այդ փաստարկների հակամարտության մեջ է, որ խնդիրն ըստ էության կարող է լուծվել:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բաբայան Դ., – Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ դար», թիվ 4 (10), 2005:

Դեմոյան Հ., – Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Եր., 2002:

Թորոսյան Տ., – Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Եր., 2008:

Մանասյան Ա., – Տարբերակներ, որոնց տարբերությունը ի հայտ է գալիս «սխալմամբ» արտաբերված արտահայտություններում, «Ազատ Արցախ», 7 հուլիսի 2001:

Մանասյան Ա., – Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելիում, Եր., 2003:

Մանասյան Ա., – Ղարաբաղյան հիմնախնդիր. փաստարկներ և փաստաթղթեր, Եր., 2005:

Մանասյան Ա., – Ղարաբաղյան հակամարտություն. Իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ, Եր., 2008, էջ 10 – 11:

Մայիլյան Մ., – Ճանաչված ու չճանաչված պետություններ. փոխհարաբերությունների բանաձևը, «Անալիտիկոն», վերլուծական ամսագիր, N 3 (39), Ստեփանակերտ, 2012, էջ 24:

Փաշայան Հ., – ԱՄՆ-ի դիրքորոշումը Ադրբեյջան-ԼՂՀ հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ԽՍՀՄ հակադրության պայմաններում (Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր), Ստեփանակերտ, 2007, թիվ 3(16), էջ 48 – 54:

Փաշայան Հ., – 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրդի որոշման իրավաքաղաքական տեսանկյունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության խնդիրը, Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված ԱրՂՀ հիմնադրման 40-ամյակին), Ստ., 2009:

Փաշայան Հ., – Ադրբեյջանա-ղարաբաղյան հակամարտության իրավաքաղաքական էտնախորքը և «ադրբեյջանական» պետության ստեղծման անօրինականության հիմքերը, Լրատու (Մեսրոպ Մաշտոց համալսարան), Ստեփանակերտ, 2010, թիվ 2 (9):

Ioannidis J., – Why Most Published Research Findings are False. - Plos Medicins. 2005. vol. 2, N 8.

Smish Sebastian, – Allah's Mountains. Politics and War in Russian Caucasus, London-New Yorke, 1998.

“Бакинский рабочий”, 9 июля, 1923.

Вестник архивов Армении, – 1989, N 1, док. N 23, с. 126.

Панарин А. С., – Философия политики, М., 1996.

Панарин А., – Политология, М., 1999.

ЦПА ИМЛ при ЦК. КПСС ф. 64. оп. 1 ед. X стр. 1, 116, 124.

Charter of the United Nations-<http://www.un.org/aboutun/charter/index.html>.

HRAYR PASHAYAN

*Lecturer of the Department of Philosophy
and Political Science in Artsakh State University
hrayr.pashayan@mail.ru*

THE ROLE OF POLITICAL ARGUMENTATIONS IN THE PROCESS OF REGULATION OF THE KARABAKH CONFLICT

SUMMARY

The article presents the role of arguments of Karabakh conflict's origin, development and settlement process, comparing it on the one hand with similar conflicts, on the other hand with stakeholders.

The Karabakh issue had been still politicized in the early 20s of last century, when against the will of Nagorno-Karabakh people, in order to export the socialist revolution eastward, Nagorno-Karabakh which had already been recognized as a part of Soviet Armenia was taken from them and was attached to the border of AzrSSR under enforcement of the third party that was not in power. From the very beginning an attempt was made to conceal the real political motivation and substitute it with peace between the Muslims and the Armenians while arguing the necessity of **economic** relationships between the upper and lower Karabakh.

In the Soviet times the conflict continued to remain politicized, that's why during the formation of NKR the Soviet leadership turned a blind eye to the division of its territory, the creation and further elimination of Red Kurdistan. As a result of Moscow's policy, the governance of so-called international Azerbaijan was ceded to the native Turks, who in 1930s were mechanically renamed as the Azeris.

In the post-Soviet period the political factors obtained a special significance, due to the fact, that Transcaucasia appeared in the focus of geopolitical interests of the major states. That's why, when we try to understand why a number of leading states recognized the independence of Kosovo, but in our case they continue their hypocritical policy, then the answer sounds very clear: that held for political reasons.

The international experience shows that legal procedures (popular referendums on independence, the adoption of civil laws etc.) are important for recognition, nevertheless for making a decision of recognition the main factor is reasoning. Of course making a political decision the foreign participants take into account the legal acts of population state formations. That is, the existence of legal basis is

preferable but not a sufficient condition for recognition. Nowadays the recognition of the newly independent states depends on the interests of states hierarchy from the place of new states. World's participants, that have interests to the region give the importance of one factor: newly created state must guarantee their interests in the region, at the cost of acceptable limits for them.

One of the most important political arguments concerning the Nagorno-Karabakh conflict, which comes out as an obstacle in conflict settlement process, is related to the peoples self-determination and states territorial integrity, but with the conflict of the same political considerations. In political dimension, when it is accompanied by necessary reservations and interests, the content and internal logic of these principles are distorted so that public legal consciousness is inevitably bound to the fact, which prevent the contradiction existing between the principles of the solution of Nagorno-Karabakh conflict. As a rule the right of national self-determination is viewed with a principle of territorial integrity in such contrast, which can be considered as legitimate by giving preference to one of them. While it can't be a contradiction between the principles of peoples free self-determination and territorial integrity of states, this is also evidenced by their legal direction. Territorial integrity has only an external orientation and regulates the protection of the external borders of other states aggression, while national self-determination has only the internal direction and is called to settle the international disputes legitimate solution within a given state.

The article shows that the analyses of the ways directed to the recognition of self-determined countries by the international centers distinctly show that political arguments (together with the existence of legal, historical, economic and other arguments), however, play the most decisive role in the process of regulation of the conflicts. The weapon of a politician-diplomat is political arguments, and in the conflict of these argumentations the problem is essentially solved.

ГРАЙР ПАШАЯН

Лектор кафедры философии и политологии АрГУ

hrayr.pashayan@mail.ru

РОЛЬ ПОЛИТИЧЕСКОЙ АРГУМЕНТАЦИИ В ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

РЕЗЮМЕ

В статье представлена роль политических аргументов в происхождении, развитии карабахского конфликта и в процессе разрешения, в сочетании ее с одной стороны с подобными конфликтами, с другой – с политическими интересами задействованных в конфликте сторон.

Карабахский конфликт политизировался еще в 20-х годах прошлого века, когда против воли народа Нагорного Карабаха /НК/, с целью экспорта на запад социалистической революции, уже признанный частью Советской Армении НК был оторван от нее и включен в состав АзССР под диктовку не имеющей таких полномочий третьей стороны. Но с самого начала была совершена попытка деликатно скрыть истинно политическую причину “урегулирования” конфликта и обосновать ее необходимостью наведения мира между мусульманами и армянами и экономической связи между Верхним и Нижним Карабахом.

В советские годы конфликт продолжал оставаться политизированным. Советское руководство “закрывало глаза” на сокращение территории Нагорного Карабаха на протяжении образования НКАО, на создание и исчезновение новой территориальной единицы – Красного Курдистана, созданной там же на территории НКАО. В итоге такой политики Москвы, в объявленной интернациональной Республике – Советском Азербайджане власть была отдана местным туркам (кавказским татарам), которые в 30-ые годы были механически переименованы в азербайджанцев.

В постсоветский период политические факторы приобрели особое значение в связи с тем, что Закавказье оказалось в центре геополитических интересов больших государств. По этой причине, когда мы пытаемся установить почему ряд ведущих государств мира признал независимость Косова, то ответ, как правило, звучит очень четко и ясно – это было продиктовано политическими соображениями.

Международный опыт показывает, что юридические процессы /всеобщие референдумы о независимости, принятие цивилизованных законов и т.д./ важны для получения признания, но, тем не менее, главным при этом является политическая целесообразность. Конечно, при принятии политических решений внешние субъекты “принимают за основу” принятые внутри каждого государственного формирования юридические акты самоопределившегося населения. Т.е., наличие соответствующей юридической основы “необходимо”, но не является достаточным условием для признания.

В наши дни признание новоиспеченных государств в первую очередь зависит от их места в порядке рангов государств. Всемирные исполнители, имеющие интересы в отношении региона, в основном считают важным одно условие: новое государство должно гарантировать защиту их интересов в регионе, в рамках приемлемых для них условий. Из сказанного следует, что без гибкой и всесторонне обоснованной политики невозможно ожидать исполнения поставленных задач.

Один из важнейших политических доводов, являющийся препятствием в процессе урегулирования Карабахского конфликта, связан все с теми же политическими соображениями исходящими из принципов свободного самоопределения и территориальной целостности государств. В политической плоскости рассуждения сопровождаются “необходимыми” оговорками и выгодами, содержание и внутренняя логика которых так искажается, что общественное юридическое сознание неминуемо склоняется к тому, что “существующее” между этими принципами противоречие препятствует юридическому решению конфликта. И так возникшее в Карабахском конфликте противоречие обретает как бы юридическое обоснование, и это противоречие предлагается разрешать произвольно, отдав по своему усмотрению предложение одному из принципов. Между тем, между принципами свободного самоопределения наций и территориальной целостностью государств не может быть противоречий, о чем свидетельствует их юридическая направленность. Территориальная целостность имеет исключительно внешнее ориентирование и регулирует защиту внешних границ государства от агрессии других государств, а самоопределение наций имеет только внутригосударственную направленность и призвано юридически регулировать решение возникающих внутри государства международных разногласий.

Таким образом, анализ шагов в направлении признания самоопределившегося государства международными центрами ясно показывает, что политические аргументы /даже несмотря на существования правовых, исторических, экономических и других аргументов/ все же играют самую решающую роль в процессе урегулирования конфликтов.